

**ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՈՎ  
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐ ԾՆՈՐՀԵԼՈՒ  
ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ  
ԿԱՐԳ**

1. Սույն կարգով սահմանվում են ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողներին, քաղաքացիական հատուկ ծառայողներին, աշխատողներին պետական պարգևներով պարգևատրելու և պատվավոր կոչումներ շնորհելու, ինչպես նաև սույն կարգի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված անձանց (այսուհետև՝ Պարգևատրվողներ) և ՀՀ զինված ուժերի զորամասերին (զորամիավորումներին) (այսուհետև՝ Զորամաս) պետական պարգևներով պարգևատրելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացման, քննարկման և պետական պարգևներով պարգևատրելու և պատվավոր կոչումներ շնորհելու վերաբերյալ միջնորդությունների ներկայացման հետ կապված հարաբերությունները:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից պետական պարգևներով պարգևատրման կարող են ներկայացվել նաև Արցախյան ազատամարտին մասնակցած և թիկունքային ապահովմանն աջակցություն ցուցաբերած անձինք, ազատամարտիկները, զինհաշմանդամները, պահեստագոր արձակված զինծառայողները, որոնք ներկայացվում են ՀՀ զինկոմիսարիատի կամ ազատամարտի վետերանների խնդիրներով գրադադարությունների կողմից:

3. Առանձին դեպքերում ՀՀ պաշտպանության նախարարության նախաձեռնությամբ ՀՀ պետական պարգևներով պարգևատրման կարող են ներկայացվել բանակաշինության գործում նշանակալի բարեգործական գործունեություն իրականացրած անհատներ (քաղաքացիներ):

4. Սիևնույն պետական պարզեռվ կրկնակի պարզեատրման առաջարկություն չի կարող ներկայացվել՝ բացառությամբ աստիճան ունեցող շքանշաններով կամ մեղալներով պարզեատրելու դեպքում:

5. Պարզեատրվողը պետական պարզեռվ պարզեատրման ներկայացվում է համաձայն «ՀՀ պետական պարզեների և պատվավոր կոչումների մասին» ՀՀ օրենքովսահմանված հերթականության՝ բացառությամբ կոնկրետ սիրանքի (արարքի) կամ բացառիկ ծառայության համար ներկայացված առաջարկությունների դեպքում:

6. Պետական պարզեռվ պարզեատրման կարող են ներկայացվել պետական պարզեռվկամ ՀՀ ՊՆ գերատեսչական մեղալովվերջին պարզեատրումից հետո 3 տարուց ոչշուտ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետությանը մատուցվել է ակնառու և բացառիկ ծառայություն: Ընդ որում, նախկինում պետական պարզեռվ կամ գերատեսչական մեղալով պարզեատրված անձինք կարող են ներկայացվել պետական պարզեռվ պարզեատրման միայն մատուցած նոր ծառայությունների համար:

7. Տոնի կամ այլ հատուկ օրվա հետ կապված պետական պարզեռվ պարզեատրման առաջարկությունները ներկայացվում են ՊՆ կադրերի և ռազմական կրթության (այսուհետև՝ ՀՀ ՊՆ Կ և ՌԿ) և ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի կադրերի (այսուհետև՝ ՀՀ ԶՈՒ ԳԾ կադրերի) վարչություններ՝ տվյալ օրվանից առնվազն 2 ամիս առաջ՝ ՀՀ ՊՆ Կ և ՌԿ և ՀՀ ԶՈՒ ԳԾ կադրերի վարչություններից ստացված գործությունների հիման վրա:

8. Պարզեատրվողի գորամասի հրամանատարը (պետը) իր ենթակային, իսկ կազմակերպության ղեկավարը՝ կազմակերպության անդամին պարզեատրելու համար ներկայացնում է պետական պարզեռվ պարզեատրելու առաջարկություն (անհատական թերթիկ)՝ համաձայն հավելված 3-ի, իսկ Պարզեատրվողի գորամասի հրամանատարը (պետը) իր ենթակային՝ պատվավոր կոչման ներկայացնելու համար՝ պատվավոր կոչումնորիելու առաջարկություն (անհատական թերթիկ)՝ համաձայն հավելված 4-ի (այսուհետև՝ Առաջարկություն), որոնց անվանացուցակները՝ ՀՀ ՊՆ համակարգում համաձայնեցվում ենըստ վերադասության, իսկ պետական այլ պաշտոն գրադեցնող և կազմակերպության անդամ հանդիսացող Պարզեատրվողի վերաբերյալ Առաջարկությունը՝ տվյալ պետական մարմնի ղեկավարության հետ:

9. Առաջարկությունը՝ ՀՀ ՊՆ համակարգում ստորագրում է գորամասի հրամանատարը (պետը) կամ բարձր հրամանատարը (պետը)՝ Պարզեատրվողին ատեսավորելու իրավասություն ունեցող ատեսավորման (որակավորման) հանձնաժողովի

Եզրակացության հիման վրա, իսկ մյուս Պարզեատրվողներին՝ կազմակերպության ղեկավարը՝ կողեգիալ մարմնի որոշման հիման վրա:

#### 10. Առաջարկությունները՝

1) ՀՀ ՊՆ աշխատակազմի, աշխատակազմից դուրս կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաև ՊՆ համակարգից դուրս այլ կազմակերպությունների ղեկավարներն ուղարկում են ՀՀ ՊՆ Կ և ՌԿ, իսկ ՀՀ ԶՈՒ և ԶՈՒԳԸ կառուցվածքային ստորաբաժանումները, բանակային կորպուսների, զորամասերի հրամանատարները՝ ՀՀ ԶՈՒ ԳԸ կադրերի վարչություններ՝ ընդհանրացված և սույն կարգի 7-րդ կետով սահմանված ժամկետում, իսկ կոնկրետ սիրանքի (արարքի) կամ բացառիկ ծառայության համար՝ առանձին (արագացված ընթացակարգով),

2) ՀՀ ՊՆ Կ և ՌԿ վարչությունում՝ քաղաքացիական հատուկ ծառայողների, ՀՀ ՊՆ ենթակայության ստորաբաժանումների սպայական և ենթասպայական կազմերի գինծառայողների, ՊՆ համակարգից դուրս այլ Պարզեատրվողների, իսկ ՀՀ ԶՈՒ ԳԸ կադրերի վարչությունում՝ ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի ենթակայության ստորաբաժանումների սպայական և ենթասպայական կազմերի գինծառայողների, ինչպես նաև շարքային կազմի պայմանագրային գինծառայողների մասով՝ ՀՀ ԶՈՒ ԳԸ կազմզորահավաքային վարչության միջոցով, 10-օրյա ժամկետում ստուգվում և նախապատրաստվում են համապատասխան անվանացուցակներ՝ «Ծառայողական օգտագործման համար» որոշմագրով: Ընդ որում, ՊՆ համակարգից դուրս այլ Պարզեատրվողների վերաբերյալ ՀՀ ոստիկանության տեղեկատվական կենտրոն կատարվում է հարցում՝ վարկարեկիչ նյութերի առկայությունը ստուգելու համար: Ծշտված տվյալների հիման վրա անվանացուցակներն ու պարզեատրման նյութերներկայացվում են ՀՀ ՊՆ պարզեատրման հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) քննարկմանը,

3) անվանացուցակներն ու պարզեատրման նյութերը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում Հանձնաժողովը քննարկում և կայացնում է համապատասխան որոշումներ: Կոնկրետ սիրանքի (արարքի) կամ բացառիկ ծառայության համար յուրաքանչյուր պարզեատրման պարագայում ներկայացված Առաջարկությունները քննարկելու համար Հանձնաժողովը գումարում է արտահերթ նիստ:

11. ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի ենթակա ստորաբաժանումների պարզեատրման ներկայացվողների անվանացուցակները, մինչև հանձնաժողովին ներկայացնելը, համաձայնեցվում են ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի հետ:

12. Առաջարկությանը կից ներկայացվում են՝

1) Պարզեատրվողի կենսագրությունը,

2) Պարզեատրվողի բնութագիրը՝ համաձայն հավելված 7-ի, որը տալիս է պարզեատրման ներկայացնողը և որում նշվում են Հայաստանի Հանրապետությանը, զինված ուժերին, հասարակությանը կամ քաղաքացիներին մատուցած ակնառու և բացառիկ ծառայությունները, ինչպես նաև մարդկային հատկանիշների նկարագիրը,

3) առնվազն երեք երաշխավորագիր՝ համաձայն հավելված 8-ի՝ միայն ՀՀ պաշտպանության նախարարության հետ համագործակցող հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացվող Պարզեատրվողների դեպքում, որը կարող են տալ ԱԺ պատգամավորներ, հանրությանը հայտնի մշակութային, հասարակական, քաղաքական, պետական գործիչներ, բարձրաստիճան հոգևորականներ և այլն:

4) կազմակերպության կողեզիալ մարմնի որոշման արձանագրությունը՝ միայն ՀՀ պաշտպանության նախարարության հետ համագործակցող հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացվող Պարզեատրվողների դեպքում,

5) Պարզեատրվողի անձնագրի կամ նույնականացման քարտի և (կամ) սոցիալական քարտի, իսկ պարտադիր ժամկետային զինծառայողների համար՝ զինվորական գրքույթի պատճենները:

13. Սույն կարգի իսկառում կամ Առաջարկությունում անձշտություն, ինչպես նաև այլ թերություն հայտնաբերվելու դեպքում ՀՀ ՊՆ Կ և ՌԿ և ՀՀ ԶՈՒ ԳԸ կաղըերի վարչությունները Առաջարկությունը վերադարձնում են Պարզեատրվողի հրամանատարին (պետին) կամ պարզեատրման ներկայացնող կազմակերպության դեկավարին (այսուհետև՝ ‘Ղեկավար’՝ նշելով հայտնաբերված անձշտության կամ թերության մասին): Համապատասխան հրամանատարը կամ ‘Ղեկավարը պարտավոր է նյութերը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում վերացնել առկա անձշտություններն ու թերությունները և դրանք կրկին ներկայացնել:

14. Պարզեատրման հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Հայաստանի «Ազգային հերոսի» կոչման միջնորդություն ներկայացնելու որոշումն ընդունվում է Հանձնաժողովի անդամների ընդիանությանը թվի ծայների առնվազն 2/3-ի, իսկ մնացած պետական պարզեատրելու միջնորդություն ներկայացնելու որոշումը՝ Հանձնաժողովի նիստին ներկա անդամների 2/3-ի դեպքում:

15. Հանձնաժողովի անդամը կարող է առաջարկել չբնարկել՝

1) ՊՆ համակարգի այն Պարզեատրվողների վերաբերյալ Առաջարկությունները, որոնք ներկայացնող ստորաբաժանումը տվյալ ուսումնական տարվա հսկողական, ամփոփիչ կամ տեսչական ստուգումների արդյունքներով բավարար գնահատական չի ստացել՝ բացառությամբ Պարզեատրվողի կողմից կատարված կոնկրետ սխրանքի (արարքի) համար ներկայացված առաջարկությունների,

2) ՀՀ պաշտպանության նախարարության հետ համագործակցող այն հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունները, որոնց վերաբերյալ առկա է հանրային անվատահություն կամ որոնք ընդգրկված են որոշակի դատական գործընթացներում՝ բացառությամբ Պարզեատրվողի կողմից կատարված կոնկրետ սխրանքի (արարքի) կամ բացառիկ ծառայության համար ներկայացված առաջարկությունների:

#### 16. Հանձնաժողովը կարող է կայացնել հետևյալ որոշումները՝

1) միջնորդել ՀՀ պաշտպանության նախարարին՝ Պարզեատրվողին կամ Զորամասին սահմանված կարգով ՀՀ պետական պարզեառողջ պարզեատրելու (պատվավոր կոչումշնորհելու) միջնորդություն ներկայացնելու համար,

2) միջնորդել ՀՀ պաշտպանության նախարարին՝ Պարզեատրվողին այլ աստիճանի կամ ՀՀ պետական այլ պարզեառողջ պարզեատրելու միջնորդություն ներկայացնելու համար,

3) ներկայացնել առաջարկություն՝ Պարզեատրվողին ՊՆ գերատեսչական մեղալովկամ պատվողով պարզեատրելու, կամ այլ խրախուսանքի ներկայացնելու համար,

4) Պարզեատրվողին ՀՀ պետական պարզեառողջ պարզեատրելու Առաջարկությանն անդրադառնալ հետագայում (հետաձգել պարզեատրման հարցը՝ մինչև խոչընդոտող հանգամանքի վերացումը),

5) մերժել Առաջարկությունը:

17. Հանձնաժողովի ընդունած որոշումների հիման վրա կազմվում է «Ծառայողական օգտագործման համար» դրոշմագրով արձանագրություն՝ յուրաքանչյուր որոշման մասին հիմնավորումներով, որը ստորագրում են Հանձնաժողովի նախագահն ու անդամները: Արձանագրությունում պարտադիր ներառվում են նաև նիստին հրավիրվածների կարծիքները:

18. Հանձնաժողովի ընդունած որոշման արձանագրությունը և Պարզեատրվողների անվանացուցակը 3-օրյա ժամկետում ներկայացվում են ՀՀ պաշտպանության նախարարի հաստատմանը:

19. ՀՀ պաշտպանության նախարարն իրավասու է մերժել անվանացուցակում նշված ցանկացած Պարզեատրվողի վերաբերյալ առաջարկությունը, ինչպես նաև կարող է փոխել Պարզեատրվողի՝ առաջարկվող պետական պարզելի տեսակը:

20. Մարտական խնդրի գերազանց կատարման կամ մարտական ուղու համար, կամ մարտական պատրաստության գնահատման արդյունքներով անընդմեջ երեք և ավելի տարի լավագույն զորամաս ճանաչվելու դեպքում Զորամասին ՀՀ պետական պարզելով պարզեատրելու վերաբերյալ առաջարկություն (թերթիկ) կարող է ներկայացնել ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետը համաձայն հավելված 5-ի, որին կից ներկայացվում է Զորամասի գործունեությունը և պատմությունը:

21. Պետության անվտանգության կամ զինված ուժերի մարտունակության բարձրացմանն ուղղված գիտական ծանրակշիռ նորարարության, ինչպես նաև մարտական ուղու համար ՀՀ ՊՆ ռազմառումնական հաստատությանը (այսուհետև՝ Զորամաս) ՀՀ պետական պարզելով պարզեատրելու վերաբերյալ առաջարկություն (թերթիկ) կարող է ներկայացնել ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան տեղակալը՝ համաձայն հավելված 5-ի, որին կից ներկայացվում է Զորամասի գործունեությունը և պատմությունը:

22. Տոնի կամ այլ հատուկ օրվա հետ կապված պարզեատրումների ժամանակ ՀՀ պաշտպանության նախարարի կողմից հաստատված Պարզեատրվողների անվանացուցակն ու Զորամասին ՀՀ պետական պարզելով պարզեատրելու վերաբերյալ Առաջարկությունը (թերթիկը՝ առնվազն 1 ամիս առաջ ՀՀ պաշտպանության նախարարի միջնորդությամբ ուղարկվում է ՀՀ նախագահի աշխատակազմ):

23. Պարզեատրման ներկայացնելուց հետո Պարզեատրվողի ազգանվան, անվան, հայրանվան, պաշտոնի, կոչման, հաստիքի, ծառայության (աշխատանքի), բնակության վայրի փոփոխման դեպքերում Առաջարկություն ներկայացնող հրամանատարը (պետը) կամ Ղեկավարը այդ մասին անհապաղ տեղեկացնում է ՀՀ ՊՆ Կ և ՈՒ կամ ՀՀ ԶՈՒ ԳԸ կադրերի վարչություններ՝ համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

24. Պարզեատրման ներկայացնելուց հետո Պարզեատրվողի նկատմամբ քրեական գործ հարուցվելու, կամ ծառայողական քննություն նշանակվելու, կամ կարգապահական տույժ ստանալու, կամ այլ դեպքերում, որոնք կարող են խոչընդոտել պետական պարզելով պարզեատրման գործընթացին, Առաջարկություն ներկայացնող հրամանատարը (պետը) կամ Ղեկավարն այդ մասին անհապաղ տեղեկացնում է ՀՀ ՊՆ Կ և ՈՒ կամ ՀՀ ԶՈՒ ԳԸ կադրերի վարչություններ, և այդ հիմքերով պարզեատրման գործընթացը կասեցվում է:

25. Պետական պարգևը վկայականի հետ միասին, իսկ պատվավոր կոչման կրծքանշանը՝ շնորհագրի և վկայականի հետ միասին Պարզեատրվողին (Զորամասին) հանձնում են ՀՀ նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ ՀՀ պաշտպանության նախարարը, կամ վերջինիս հանձնարարությամբ՝ ՀՀ զինված ուժերի գլխավոր շտարի պետը, ՀՀ պաշտպանության նախարարի և զինված ուժերի գլխավոր շտարի պետի տեղակալները, զորամիավորումների և միավորումների հրամանատարները, վարչությունների և առանձին բաժինների պետերը:

26. Պետական պարգևը վկայականի հետ միասին, իսկ պատվավոր կոչման կրծքանշանը՝ շնորհագրի և վկայականի հետ միասին Պարզեատրվողին (Զորամասին) է հանձնվում հանդիսավոր պայմաններում, որի ժամանակ ընթերցվում է ՀՀ նախագահի հրամանագիրը:

27. Հետմահու պարզեատրման դեպքում պետական պարգևը վկայականի հետ միասին հանձնվում է պարզեատրվածի ընտանիքի անդամին:

28. Այն դեպքում, եթե Պարզեատրվողը հիվանդության, հաշմանդամության կամ այլ պատճառով չի կարող ներկայանալ պարզեատրման, պետական պարգևը վկայականի հետ միասին, իսկ պատվավոր կոչման կրծքանշանը՝ շնորհագրի և վկայականի հետ միասին Հայաստանի և Արցախի Հանրապետությունների տարածքներում հանձնվում է այն վայրում, որտեղ գտնվում է Պարզեատրվողը: Հայաստանի և Արցախի Հանրապետությունների տարածքներից դուրս մեղալների հանձնման հարցերը քննարկվում են անհատական, առանձին դեպքերում կարող է իրականացվել ՀՀ ՊՆ պաշտպանական քաղաքականության վարչության միջոցով՝ դիվանագիտական կառույցների միջոցով կամ տվյալ տարածք ՀՀ ՊՆ պատվիրակության այցի ժամանակ:

29. Պարզեատրման մասին նյութերի ժամանակին ձևակերպման, Պարզեատրվողներին պարզեների ժամանակին կազմակերպման, ինչպես նաև հանձնված պարզեների հաշվառման գործընթացի իրականացման համար պատասխանատու են ՀՀ ՊՆ Կ և ՈՒ և ՀՀ ԶՈՒ ԳԸ կադրերի վարչությունները՝ իրենց իրավասությունների շրջանակում, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարի հանձնարարությամբ գործընթացում ընդգրկված պաշտոնատար այլ անձինք:

30. Զորամասին պետական պարզեատրելու դեպքում Հանձնաժողովի առաջարկությամբ այդ մասին գրառում կարող է կատարվել Զորամասի հրամանատարի անձնական գործում:

**ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ  
ԿԱՐԳ**

1. Սույն կարգով սահմանվում են ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողներին, քաղաքացիական հատուկ ծառայողներին, աշխատողներին, ինչպես նաև սույն կարգի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված անձանց (այսուհետև՝Պարզեատրվողներ) ՀՀ պաշտպանության նախարարության գերատեսչական մեդալներով պարզեատրման առաջարկությունների ներկայացման, քննարկման և պարզեատրման հետ կապված հարաբերությունները:

2. Գերատեսչական մեդալով պարզեատրման կարող են ներկայացվել նաև Արցախյան ազատամարտին մասնակցած և թիկունքային ապահովմանն աջակցություն ցուցաբերած, բանակ-հասարակություն կապի ամրապնդման և մատադ սերնդի հայրենասիրական դաստիարակության գործում մեծ ներդրում ունեցած անձինք, ինչպես նաև ազատամարտիկներ, զինհաշմանդամներ, պահեստազոր արձակված զինծառայողներ, որոնք կարող են պարզեատրման ներկայացվել ՀՀ ՊՆ համակարգի ստորաբաժնումների դեկավարների ուազատամարտի վետերանների խնդիրներով զբաղվող՝ պաշտպանության նախարարության հետ համագործակցող հասարակական կազմակերպությունների կողմից, իսկ Բանակի օրվա կապակցությամբ՝ նաև ՀՀ ազգային անվտանգության ծառայության, ՀՀ ոստիկանության, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, ՀՀ դատախազության և ՀՀ քննչական կոմիտեի աշխատակիցները:

3. Առանձին դեպքերում գերատեսչական մեդալներով պարզեատրման կարող են ներկայացվել բանակաշինության գործում նշանակալի բարեգործական գործունեություն իրականացրած անհատներ (քաղաքացիներ)` ՀՀ պաշտպանության նախարարության նախաձեռնությամբ:

4. Բացառիկ դեպքերում, ՀՀ պաշտպանության նախարարի որոշմամբ, անձը կարող է արագացված ընթացակարգով պարզեցնել գերատեսչական մեղալով, որի մասին ՀՀ ՊՆ աշխատակազմի դեկավարը անմիջապես տեղեկացնում է ՀՀ ՊՆ պարզեցնելով (այսուհետև՝ Հանձնաժողով):

5. Միևնույն գերատեսչական մեղալով կրկնակի պարզեցնելով չի թույլատրվում:

6. Պարզեցնելով գերատեսչական մեղալով պարզեցնելով ներկայացվում է մեղալների կանոնադրություններով և ՀՀ պաշտպանության նախարարի 2015թ. ապրիլի 2-ի N323 հրամանով սահմանված հերթականության համաձայն՝ բացառությամբ կոնկրետ սխրանքի (արարքի) կամ բացառիկ ծառայության համար ներկայացված առաջարկությունների դեպքում:

7. ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի գերատեսչական մեղալով պարզեցնելով կարող են ներկայացվել պետական պարզեցնելով կամ ՀՀ ՊՆ գերատեսչական մեղալով վերջին պարզեցնելումից հետո 3 տարվանից ոչ շուտ՝ բացառությամբ այն դեպքերը, երբ Հայաստանի Հանրապետությանը մատուցվել է ակնառու և բացառիկ ծառայություն: Ընդ որում, նախկինում պետական պարզեցնելով կամ գերատեսչական մեղալով պարզեցնելով անձինք գերատեսչական մեղալով պարզեցնելով կարող են ներկայացվել միայն մատուցած նոր ծառայությունների համար:

Բացառություն են կազմում «Անբասիր ծառայության համար» քառասուհան մեղալներով պարզեցնելով պարզեցնելով պարզեցնելումները, որոնք մեղալի կանոնադրության համաձայն ներկայացվում, սույն կարգի 8-րդ կետում նշված ստորաբաժանումների կողմից ստուգվում և անվանացուցակների հիման վրա ներկայացվում են ՀՀ պաշտպանության նախարարի հրամանագրմանը:

8. Տոնի կամ այլ հատուկ օրվա հետ կապված գերատեսչական մեղալով պարզեցնելով պարզեցնելով պարզեցնելումները ներկայացվում են ՊՆ կադրերի և ուսումնական կրթության (այսուհետև՝ ՀՀ ՊՆ Կ և ՈԿ) և ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի կադրերի (այսուհետև՝ ՀՀ ԶՈՒ ԳԾ կադրերի) վարչություններ՝ տվյալ օրվանից առնվազն 1 ամիս առաջ՝ ՀՀ ՊՆ Կ և ՈԿ և ՀՀ ԶՈՒ ԳԾ կադրերի վարչությունների գրությունների հիման վրա:

9. Պարզեցնելով գորամասի հրամանատարը (պետը) իր ենթակային, իսկ պետական մարմնի կամ կազմակերպության դեկավարը (այսուհետև՝ Դեկավար)՝ համապա-

տասխանաբար պետական մարմնի աշխատակցին կամ կազմակերպության անդամին պարզեցնելու համար ներկայացնում է գերատեսչական մեղալով պարզեցնելու առաջարկություն՝ համաձայն հավելված 4-ի (այսուհետև՝ Առաջարկություն), որոնց անվանացուցակները ՀՀ ՊՆ համակարգում համաձայնեցվում են ըստ վերադասության, իսկ կազմակերպության անդամ հանդիսացող և միաժամանակ պետական պաշտոն գրադեցնող Պարզեցնողի վերաբերյալ Առաջարկությունը՝ տվյալ պետական մարմնի ղեկավարության հետ:

10. Առաջարկությունը ՀՀ ՊՆ համակարգում ներկայացնում է զորամասի հրամանատարը (պետը) կամ բարձր հրամանատարը (պետը)` խորհրդակցելով զորամասի հրամանատարի տեղակալների հետ, իսկ մյուս Պարզեցնողների վերաբերյալ Առաջարկությունները՝ Ղեկավարը՝ կողեգիալ մարմնի որոշման հիման վրա:

#### 11. Առաջարկությունները՝

1) ՀՀ ՊՆ աշխատակազմի, աշխատակազմից դուրս կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև Ղեկավարներն ուղարկում են ՀՀ ՊՆ Կ և ՈՒ, իսկ ՀՀ ԶՈՒ և ԶՈՒ ԳԸ կառուցվածքային ստորաբաժանումները, բանակային կորպուսների, զորամասերի հրամանատարները՝ ՀՀ ԶՈՒ ԳԸ կաղըների վարչություններ՝ ընդհանրացված և սույն կարգի 7-րդ կետով սահմանված ժամկետում, իսկ կոնկրետ սխրանքի (արարքի) կամ բացառիկ ծառայության համար՝ առանձին (արագացված ընթացակարգով),

2) ՀՀ ՊՆ Կ և ՈՒ վարչությունում՝ քաղաքացիական հատուկ ծառայողների, ՀՀ ՊՆ ենթակայության ստորաբաժանումների սպայական և ենթասպայական կազմերի գինծառայողների, ՊՆ համակարգից դուրս այլ Պարզեցնողների, ՀՀ ԶՈՒ ԳԸ կաղըների վարչությունում՝ ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի ենթակայության ստորաբաժանումների սպայական և ենթասպայական կազմերի գինծառայողների, ինչպես նաև շարքային կազմի պայմանագրային գինծառայողների մասով՝ ՀՀ ԶՈՒ ԳԸ կազմորահավաքային վարչության միջոցով, 10-օրյա ժամկետում ստուգում են, նախապատրաստվում համապատասխան անվանացուցակներ՝ «Ծառայողական օգտագործման համար» դրոշմագրով: Ընդ որում, ՊՆ համակարգից դուրս այլ Պարզեցնողների (բացառությամբ պետական մարմինների աշխատակիցների) վերաբերյալ ՀՀ ոստիկանության տեղեկատվական կենտրոն կատարվում է հարցում՝ վարկարեկիչ նյութերի առկայությունը ստուգելու համար: Շշտված տվյալների հիման վրա անվանացուցակներն ու պարզեցնողները ներկայացվում են Հանձնաժողովի քննարկմանը,

3) անվանացուցակներն ու պարզեցման նյութերը ստացման օրվանից 7-օրյա ժամկետում Հանձնաժողովը քննարկում և կայացնում է համապատասխան որոշումներ: Իսկ կոնկրետ սխրանքի (արարքի) կամ քաջորդիկ ծառայության համար յուրաքանչյուր պարզեցման պարագայում ներկայացված Առաջարկությունները քննարկելու համար Հանձնաժողովը գումարում է արտահերթ նիստ:

12. ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի ենթակա ստորաբաժանումների՝ գումարտակի հրամանատարի, հավասարազոր և բարձր պաշտոն զբաղեցնող Պարզեցման անվանացուցակները, մինչև Հանձնաժողովին ներկայացնելը, համաձայնեցվում են ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի հետ:

13. Առաջարկությանը կից ներկայացվում են (բացառությամբ սույն կարգի 3-րդ և 4-րդ կետերում նշված դեպքերի):

1) Պարզեցման բնութագիրը՝ համաձայն հավելված 5-ի, որը տալիս է պարզեցման ներկայացնողը և որում նշվում են Հայաստանի Հանրապետությանը, զինված ուժերին, հասարակությանը կամ քաղաքացիներին մատուցած ակնառու և քաջորդիկ ծառայությունները, ինչպես նաև մարդկային հատկանիշների նկարագիրը,

2) առնվազն երեք երաշխավորագիր՝ համաձայն հավելված 6-ի՝ միայն ՀՀ պաշտպանության նախարարության հետ համագործակցող հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացվող Պարզեցման դեպքում, որը կարող են տալ ԱԺ պատգամավորներ, հանրությանը հայտնի մշակութային, հասարակական, քաղաքական, պետական գործիչներ, բարձրաստիճան հոգևորականներ և այլն:

3) կազմակերպության կողեզրի մարմնի որոշման արձանագրությունը՝ միայն ՀՀ պաշտպանության նախարարության հետ համագործակցող հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացվող Պարզեցման դեպքում:

14. Սույն կարգի խախտում կամ առաջարկությունում անձտություն, ինչպես նաև այլ թերություն հայտնաբերվելու դեպքում ՀՀ ՊՆ Կ և ՌԿ, ՀՀ ԶՈՒ ԳԾ կադրերի վարչությունները կամ Հանձնաժողովի քարտուղարը առաջարկությունը վերադարձնում են Պարզեցման հրամանատարին (պետին) կամ պարզեցման ներկայացնող Ղեկավարին՝ նշելով հայտնաբերված անձտության կամ թերության մասին: Համապատասխան հրամանատարը կամ Ղեկավարը պարտավոր է նյութերը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում վերացնել առկա անձտություններն ու թերությունները և դրանք կրկին ներկայացնել:

15. Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե նիստին մասնակցում է Հանձնաժողովի անդամների կեսից ավելի: Գերատեսչական մեղալով պարզեցման

առաջարկություն ներկայացնելու որոշումն ընդունվում է Հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների 2/3-ի դեպքում:

16. Հանձնաժողովի անդամը կարող է առաջարկել չբնարկել՝

1) **ՊՆ** համակարգի այն Պարզեատրվողների վերաբերյալ Առաջարկությունները, որոնք ներկայացնող ստորաբաժանումը տվյալ ուսումնական տարվա հսկողական, ամփոփիչ կամ տեսչական ստուգումների արդյունքներով բավարար գնահատական չի ստացել՝ բացառությամբ Պարզեատրվողի կողմից կատարված կոնկրետ սխրանքի (արարքի) համար ներկայացված առաջարկությունների,

2) ՀՀ պաշտպանության նախարարության հետ համագործակցող այն հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված Առաջարկությունները, որոնց վերաբերյալ առկա է հանրային անվտանքություն կամ որոնք ընդգրկված են որոշակի դատական գործընթացներում՝ բացառությամբ Պարզեատրվողի կողմից կատարված կոնկրետ սխրանքի (արարքի) կամ բացառիկ ծառայության համար ներկայացված առաջարկությունների:

17. Հանձնաժողովը կարող է կայացնել հետևյալ որոշումները՝

1) ներկայացնել առաջարկություն՝ Պարզեատրվողին **ՊՆ** գերատեսչական մեղալով պարզեատրելու համար,

2) ներկայացնել առաջարկություն՝ Պարզեատրվողին այլ գերատեսչական մեղալով կամ գերատեսչական պատվոգրով պարզեատրելու համար,

3) Պարզեատրվողին գերատեսչական մեղալով պարզեատրելու Առաջարկության անդրադառնալ հետագայում (հետաձգել պարզեատրման հարցը՝ մինչև խոչընդոտող հանգամանքի վերացումը),

4) մերժել Առաջարկությունը:

18. Հանձնաժողովի ընդունած որոշումների հիման վրա կազմվում է «Ծառայողական օգտագործման համար» դրոշմագրով արձանագրություն՝ յուրաքանչյուր որոշման մասին հիմնավորումներով, որը ստորագրում են հանձնաժողովի նախագահն ու անդամները:

Արձանագրության մեջ պարտադիր ներառվում են նաև նիստին հրավիրվածների կարծիքները:

19. Հանձնաժողովի ընդունած որոշման արձանագրությունը, Պարզեատրվողների անվանացուցակները՝ գերատեսչական մեղալներով պարզեատրման հրամանի նախագծի հետ, հանձնաժողովի նախագահի կողմից 3-օրյա ժամկետում ներկայացվում են ՀՀ պաշտպանության նախարարի որոշմանը:

20. ՀՀ պաշտպանության նախարարն իրավասու է մերժել անվանացուցակում նշված ցանկացած Պարզեատրվողի վերաբերյալ Առաջարկությունը, ինչպես նաև կարող է փոխել Պարզեատրվողի՝ առաջարկվող գերատեսչական մեղալի տեսակը:

21. Պարզեատրման ներկայացնելուց հետո Պարզեատրվողի ազգանվան, անվան, հայրանվան, պաշտոնի, կոչման, հաստիքի, ծառայության (աշխատանքի) փոփոխման դեպքերում Առաջարկություն ներկայացնող հրամանատարը (պետը) կամ Ղեկավարն այդ մասին անհապաղ տեղեկացնում է ՀՀ ՊՆ Կ և ՌԿ կամ ՀՀ ԶՈՒ ԳԸ կադրերի վարչություններ՝ համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

22. Պարզեատրման ներկայացնելուց հետո Պարզեատրվողի նկատմամբ քրեական գործ հարուցվելու, կամ ծառայողական քննություն նշանակվելու, կամ կարգապահական տույժ ստանալու, կամ այլ դեպքերում, որոնք կարող են խոչընդոտել գերատեսչական մեղալով պարզեատրման գործընթացին, Առաջարկություն ներկայացնող հրամանատարը (պետը) կամ Ղեկավարն այդ մասին անհապաղ տեղեկացնում է ՀՀ ՊՆ Կ և ՌԿ կամ ՀՀ ԶՈՒ ԳԸ կադրերի վարչություններ և այդ հիմքերով պարզեատրման գործընթացը կասեցվում է:

23. Գերատեսչական մեղալը վկայականի հետ միասին Պարզեատրվողին հանձնում են ՀՀ պաշտպանության նախարարը կամ նրա հանձնարարությամբ՝ ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետը, ՀՀ պաշտպանության նախարարի և զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալները, զորամիավորումների և միավորումների հրամանատարները, վարչությունների և առանձին բաժինների պետերը: Հանձնարարականը կարող է լինել բանավոր կամ հստակեցվել պարզեատրման հրամանում:

24. Գերատեսչական մեղալը վկայականի հետ Պարզեատրվողին է հանձնվում հանդիսավոր պայմաններում, որի ժամանակ ընթերցվում է ՀՀ պաշտպանության նախարարի հրամանը:

25. Հետմահու պարզեատրման դեպքում գերատեսչական մեղալը վկայականի հետ միասին հանձնվում է պարզեատրվածի ընտանիքի անդամին:

26. Այն դեպքում, եթե Պարզեատրվողը հիվանդության, հաշմանդամության կամ այլ պատճառով չի կարող ներկայանալ պարզեատրման, պետական պարզեր վկայականի հետ միասին Հայաստանի և Արցախի Հանրապետությունների տարածքներում հանձնվում է այն վայրում, որտեղ գտնվում է Պարզեատրվողը: Հայաստանի և Արցախի Հանրապետությունների տարածքներից դուրս մեղալների հանձնման հարցերը քննարկվում են անհատական, առանձին դեպքերում կարող է իրականացվել ՀՀ ՊՆ

պաշտպանական քաղաքականության վարչության միջոցով՝ դիվանագիտական կառույցների միջոցով կամ տվյալ տարածք ՀՀ ՊՆ պատվիրակության այցի ժամանակ:

27. Պարզեատրման մասին նյութերի ժամանակին ձևակերպման, պարզեատըր-վողներին պարզեների ժամանակին հանձնման կազմակերպման, ինչպես նաև հանձնված պարզեների հաշվառման գործընթացի իրականացման համար պատասխանատու են ՀՀ ՊՆ Կ և ՌԿ և ՀՀ ԶՈՒ ԳԸ կադրերի վարչությունները՝իրենց իրավասությունների շրջանակում, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարի հանձնարարությամբ գործընթացում ընդգրկված պաշտոնատար այլ անձինք:

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՈՎ ՊԱՐԳԵՎԱՏԲԵԼՈՒ  
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ (ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ)**

(առաջարկություն ներկայացնողի պաշտոնը, կոչումը, անունը, ազգանունը)

Առաջարկում եմ

(պարզեցնելու անունը, հայրանունը, ազգանունը)

Ծննդյան թիվը, ամիսը, ամսաթիվը

Մահվան թիվը, ամիսը, ամսաթիվը, (եթե պարզեցնալու հետմահու)

Ծննդյան վայրը

Սեռը քաղաքացիությունը

Կրթությունը (եթեև որ ուսումնական հաստատությունն է պարտել)

Եթեև ինչպիսի պետական պարզեցներով է պարզեցնել

Ծառայության (աշխատանքի) վայրը և պաշտոնը

Կոչումը (զինվորական, քհծ, գիտական և այլն)

Տեղեկություններ ծառայողական (աշխատանքային) գործունեության մասին

Ընտանեկան դրությունը

Հասցեն

Այլ տվյալներ

Ինչի համար է ներկայացվում պարզեցնատրման

(մանրամասն նկարագրել կատարած սխրանքը, արարքը կամ մատուցած ծառայությունը)

Պարզեցնել

(ՀՀ պետական պարզեցնելու մասին օրենքը)

Հրամանատար (պետ, կազմակերպության ղեկավար)՝

Կ.Տ.

(ստորագրությունը, ա.հ.ա.)

Հավելված 4

Հայաստանի Հանրապետության  
պաշտպանության նախարարի

2017թ. 11 « 02 »-ի

N 1154 հրամանի

**ՀՀ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄ ԾՆՈՐՀԵԼՈՒ  
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ (ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ)**

(առաջարկություն ներկայացնողի պաշտոնը, կոչումը, անունը, ազգանունը)

Առաջարկում եմ \_\_\_\_\_  
(պատվավոր կոչում շնորհելու ներկայացվողի անունը, հայրանունը, ազգանունը)

Ծննդյան թիվը, ամիսը, ամսաթիվը \_\_\_\_\_  
(Մահվան թիվը, ամիսը, ամսաթիվը, (եթե պարզեատրման է ներկայացվել հետմահու))

Ծննդյան վայրը \_\_\_\_\_

Սեռը \_\_\_\_\_ քաղաքացիությունը \_\_\_\_\_

Կրթությունը (եթեև որ ուսումնական հաստատությունն է ավարտել) \_\_\_\_\_

Եթեև ինչպիսի պետական պարզեներով է պարզեատրվել \_\_\_\_\_

Ծառայության (աշխատանքի) վայրը և պաշտոնը \_\_\_\_\_

Կոչումը (զինվորական, քհծ, գիտական և այլն) \_\_\_\_\_

Տեղեկություններ ծառայողական (աշխատանքային) գործունեության մասին \_\_\_\_\_

Ընտանեկան դրությունը \_\_\_\_\_

Հասցեն \_\_\_\_\_

Այլ տվյալներ \_\_\_\_\_

Ինչի համար է ներկայացվում պարզեատրման \_\_\_\_\_

(մանրամասն նկարագրել մատուցած ծառայությունը)

Ծնորհել \_\_\_\_\_

(ՀՀ պատվավոր կոչման անվանումը)

Հրամանատար (պետ, կազմակերպության ղեկավար)` \_\_\_\_\_

Կ.Տ.

(ստորագրությունը, ա.հ.ա.)

Հավելված 5

Հայաստանի Հանրապետութան  
պաշտպանության նախարարի

2017թ. 11 « 02 »-ի

N 1154 հրամանի

**ՀՀ ԶՈՒ ԶՈՐԱՍՏԱՏԻՆ (ԶՈՐԱՄԱՎՈՐՄԱՆ) ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՈՎ  
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ (ԹԵՐԹԻԿ)**

(Ըիշնորդություն ներկայացնող մարմնի անվանումը)

Սիշնորդում ենք \_\_\_\_\_

(զորամասի անվանումը կամ թիվը)

Հիմնադրման, կազմավորման տարեթիվը \_\_\_\_\_

Երբևէ ինչ պետական պարգևներով է պարզեատրվել \_\_\_\_\_

Գործունեության վայրը \_\_\_\_\_

Այլ տվյալներ \_\_\_\_\_

Պարզեատրել \_\_\_\_\_

(ՀՀ պետական պարգևի անվանումը)

Հրամանատար (պետ, կազմակերպության ղեկավար)` \_\_\_\_\_

Կ.Տ.

(ստորագրությունը, ա.հ.ա.)

**ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

(առաջարկություն ներկայացնողի պաշտոնը, կոչումը, անունը, ազգանունը)

Առաջարկում են՝

(պարզեցնելու համար ներկայացվողի անունը, հայրանունը, ազգանունը)

Ծննդյան թիվը, ամիսը, ամսաթիվը \_\_\_\_\_

Ծննդյան վայրը \_\_\_\_\_

Սեռը \_\_\_\_\_ քաղաքացիությունը \_\_\_\_\_

Կրթությունը (եթե և որ ուսումնական հաստատությունն է ավարտել) \_\_\_\_\_

Եթեև ինչպիսի պետական պարզեցված ու գերատեսչական մեդալով է պարզեցվել \_\_\_\_\_

Ծառայության (աշխատանքի) վայրը և պաշտոնը \_\_\_\_\_

Կոչումը (զինվորական, քհծ, գիտական և այլն) \_\_\_\_\_

Տեղեկություններ ծառայողական (աշխատանքային) գործունեության մասին \_\_\_\_\_

Ընտանեկան դրությունը \_\_\_\_\_

Հասցեն \_\_\_\_\_

Այլ տվյալներ \_\_\_\_\_

Ինչի համար է ներկայացվում պարզեցնելու

(մանրամասն նկարագրել կատարած սխրանքը, արարքը կամ մատուցած ծառայությունը)

Պարզեցնելու \_\_\_\_\_

(գերատեսչական մեդալի անվանումը)

Հրամանատար (պետ, կազմակերպության ղեկավար)՝ \_\_\_\_\_

Կ.Տ.

(ստորագրությունը, ա.հ.ա.)

**Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ի Ր**

(պարզեատրման ներկայացվողի կոչումը, անունը, հայրանունը, ազգանունը)

Ծննդյան թիվը, ամիսը, ամսաթիվը \_\_\_\_\_

Կրթությունը (եթե և որ ուսումնական հաստատությունն է ավարտել) \_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Ծառայության (աշխատանքի) վայրը և պաշտոնը, երբվանից է ծառայում (աշխատում) ՀՀ զինված ուժերում (աշխատում (կամ անդամակցում) տվյալ կազմակերպությունում) \_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Ծառայողական կամ աշխատանքային գործունեությունը, կատարած արարքը (սխրանքը), մատուցած ծառայությունը, բնութագրականը, ինչի համար ներկայացվում է պարզեատրման \_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Հաշվի առնելով վերոգրյալը, արժանի է պարզեատրման \_\_\_\_\_

(պետական պարզեի կամ գերատեսչական մեղալի անվանումը)

Ուղակի պետ (կազմակերպության ղեկավար)` \_\_\_\_\_

Կ.Տ.

(ստորագրությունը, ա.հ.ա.)

## ԵՐԱԾԽԱՎՈՐԱԳԻՐ

764 \_\_\_\_\_

(Երաշխավորագիր ներկայացնողի պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը)

-U,

Երաշխավորում եմ -ից

(պարզեցնելու և սպառագիտության ամրապնդության համար, անունը, հայրանունը, ազգանունը)

ԱԵՐԿԱԽԱԳՆԵԿՈՒ պարզեատրման

(պետական պարզեցի կամ գերատեսչական մեղայի անվանումը)

հաշվի առնելով, որ նա

(ධានωιητακωνάν կամ աշխատանքային գործունեությունը, կատարած արարությունը, մատուցած

ծառայությունը, բնութագրականը, ինչի համար ներկայազնում է պարզեատրման)

Երաշխավորող՝ \_\_\_\_\_  
(ստորագրությունը, Ա.Հ.Ա.)